ԳԵՎՈՐԳ ՄԵԼՔՈՆՅԱՆ
GEVORG MELKONYAN

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 1916-1917 ԹԹ.

Կայսերական Գերմանիայի կառավարող շրջանների այն հաշվարկը, որ պատերազմի ծանրության կենտրոնը Արևելք տեղափոխելու ճանապարհով կհասնի վճռական հաջողության, չարդարացվեցին: 1916 թ. փետրվարի 16-ին ռուսական զորքերը գրավեցին Էրզրում քաղաքը, որի պաշտպանության համար մղած մարտերում թուրքական բանակը տվեց ավելի քան 60 հազար սպանված: Էրզրումի գրավումը ռազմավարական կարևոր նշանակություն ուներ: Երիտթուրքերի կառավարության կողմից իրականացվող հայ բնակչության տեղահանությունը և կոտորածները 1916 թ. շարունակվում էին, իսկ այդ հարցում Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը, չնայած միջազգային հանրության խիստ քննադատությանը, որևէ էական փոփոխության չենթարկվեց: 1916 թ. արևմտահայության տեղահանության և կոտորածների կանխումից բացի կարևոր էր նաև Միջագետքի անապատներ բշված և սովի ու համաճարակների մատնված հայության համար կենսական պայմանների ապահովումը: Սակայն այդ հարցում ևս գերմանական կառավարությունը որդեգրեց չեզոք դիրքորոշում և առանձին գերմանացի գործիչներից բացի, հայ գաղթականներին օգնելու գործը թողեց մի քանի բարեգործական կազմակերպությունների հույսին, որոնց հնարավորությունները չափազանց նվազ էին հազարավոր հայերին փրկելու համար: Այդ հարցի առնչությամբ 1916 թ. հունվարի 29-ին Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը Կ. Պոլսի Գերմանիայի դեսպան կոմս Վոլֆ Մետերնիխին ուղղված հեռագրում նշում էր, որ գերմանացիների կողմից հայերին օգնելու համար տրամադրված փողով հնարավոր չեղավ հատուկ կազմակերպություն ստեղծել, քանի որ թուրքական կառավարությունը մերժեց այն: Կարիքն այնքան մեծ էր, որ չէր կարելի մերժել կազմակերպության ստեղծումը՝ սովյալներին օգնելու համար[1]: 1916 թ. Վոլֆ Մետերնիխը Գերմանիայի կառավարությանը միջնորդեց՝ որբացած հայերին գերմանական առաքելությունների կողմից օգնություն կազմակերպելու

[1] Լեփսիուս Ց., Գերմանիան և Հայաստանը **1914-1918**, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր **II** , Երևան, **2008**, էջ **18**:

նպատակով: Նման առաջարկով հանդես եկավ նաև Դամասկոսում Գերմանիայի հյուպատոս Լոյտվեղը: Սակայն թուրքական իշխանություններն ու հատկապես Ջեմալ փաշան արգելք հանդիսացան հայերի համար օգնություն կազմակերպելուն՝ այն համարելով Թուրքիայի ներքին գործերին միջամտելու փորձ[2]: Հայ գաղթականներին օգնելու հարցում պաշտոնական Բեռլինը նախընտրեց ոչ պաշտոնական ճանապարհը, քանի որ մտավախություն ուներ, որ հայերին օգնություն ցուցաբերելը կարող է հանգեցնել գերմանաթուրքական հարաբերությունների սրմանը: 1916 թ. փետրվարի 26-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Ցիմերմանը, անդրադառնալով հայ գաղթականներին աջակցելու խնդրին, նշում էր. «...1915 թ. Հայաստանի տուժածների համար Շվեյցարական օժանդակության միության հանձնաժողովի դիմումը՝ մեղմացնել բռնագաղթված հայերի տառապանքը, սիրով կընդունվի ու կհովանավորվի կայզերական կառավարության կողմից, ինչքան հնարավոր է, ապահովելով պահանջված հարգանքը դաշնակից Թուրքիայի նկատմամբ, օգնել ոչ պաշտոնական ճանապարհով...հուսով եմ, որ օգնության կազմակերպիչները կխուսափեն հոգուտ հայերի կամ Թուրքիայի դեմ որևէ քաղաքական ագիտացիա ծավալելուց»[3]: Ցիմերմանը արտահայտում էր պաշտոնական Բեռլինի տեսակետը, որը հիմնված էր գերմանաթուրքական դաշնակցային հարաբերությունների պահպանման, ինչպես նաև միջազգային և սեփական հանրության շրջանում այն տպավորության ստեղծման, իբր Կայսերական Գերմանիան իսկապես մտահոգված է հայ գաղթականներին աջակցելու խնդրում և նպաստում է այդ հարցով զբաղվող բարեգործական ընկերություններին: Ցիմերմանը հայ աքսորյալներին օգնելու հարցում նախապատվությունը տալիս էր Շվեյցարական բարեգործական ընկերության առաջարկությանը՝ տեղերում գտնվող վստահելի անձանց միջոցով տառապյալներին բաժանել դրամ, հագուստ և սննդամթերք: Եթե համապատասխան մարդկանց շվեյցարական բարեգործական ընկերությունը դեռ չէր կարողացել գտնել, ապա գերմանացի պաշտոնյան առաջակում էր դիմել կայսերական հյուպատոսության օգնությանը, որի միջամտությունը հայ գաղթականներին օգնելու հարցում մեծապես կնպաստեր Գերմանիայի հեղինակության բարձրացմանը: Ուստի Ցիմերմանը ցանկանում էր, որպեսզի շվեյցարական օգնությունը բաժանվի գերմանացի դիվանագետների միջոցով: Աքսորի ենթարկված և Միջագետքի անապատներում սովի ու համա-

---

[2] Տե ս Степанян Ст., Армения в политике империалистической Германии (конец XIX-начало XX века), Ер., 1975, с. 155.

[3] Լեհպհուս Ց., Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, էջ 29:

մարակների մատնված հայությանը աջակցելու միջոցով Կայսերական Գերմանիայի կառավարությունը միջազգային հանրության առջև քաղաքական կարևոր քայլ էր փորձում իրականացնել։ Սակայն, այդ հանգամանքից բացի, գոյություն ուներ ևս մեկ կարևոր պատճառ, որի հետևանքով գերմանացի գործիչները շահագրգռված էին օգնելու Միջագետք աքսորված ու դեռևս կենդանի մնացած հայությանը։ Հայ պատմագրության մեջ լավ ուսումնասիրված չեն այն պատճառները, որոնք ստիպում էին գերմանական կառավարությանը լրջապես մտահոգվել հայ գաղթականների խնդրով և որոշ հեղինակներ գերմանական օգնության հիմքում տեսնում էին բացառապես մարդասիրական մղումներ։ Մեր կարծիքով պաշտոնական Բեռլինին չափազանց մտահոգում էր այն փաստը, որ Միջագետքի անապատներում պատսպարված և հակաթուրքական ու հակագերմանական տրամադրություններ ունեցող հայ գաղթականները, առնվազն պարենավորման տեսանկյունից, կարող էին խոչընդոտել հարավային ճակատում գերմանաթուրքական գորքերի ռազմական հաջողություններին։ Հետևաբար հայ բնակչությանը օգնություն տրամադրելու գերմանական մտադրությունների հիմքում ընկած էր ոչ թե մարդասիրական, այլ կոնկրետ ռազմական շահը։ Սակայն այդ խնդրի լուծումը թուրքական իշխանությունները տեսնում էին կոտորածները շարունակելու միջոցով։

Իսկ ինչպե՞ս էր տեսնում Միջագետքի անապատներ աքսորված հայ գաղթականության խնդրի լուծումը գերմանական կառավարությունը, թաց գիտակցելով, որ եվրոպական և ամերիկյան տարբեր բարեգործական ընկերությունների օգնությունները չէին կարող բավարար լինել նման բազմահազար բնակչության կենսական պայմանները ապահովելու համար։ Եթե Գերմանիայի ղեկավարությունը հրաժարվեց հայ գաղթականներին պաշտոնական օգնություն տրամադրելուց և չնչին հնարավորություններ ստեղծեց Լեփսիուսի ղեկավարած ընկերությանը հայերին օգնելու հարցում, ապա ակնհայտ է, որ հայ գաղթականների ճակատագիրը չէր հետաքրքրում Գերմանիայի ղեկավարությանը։ Հետևաբար որոշ հեղինակների այն պնդումները, թե իբր գերմանացիները շահագրգռված էին հայ բնակչության տեղահանությանը և Բաղդադի երկաթուղու երկայնքով բնակեցնելուն, չի համապատասխանում իրականությանը, քանի որ եթե գերմանացի գործիչները նման ծրագրեր ունենային, ապա հայ գաղթականության համար կստեղծեին ապրելու տարրական պայմաններ, ինչը չիրականացրեց։ Ավելին, գերմանական կառավարության ներկայացուցիչների կողմից խիստ քննադատության էին ենթարկվում այն գերմանացի գործիչները, ովքեր փորձում էին առանց թուրքերի հետ համաձայնացնելու որևէ կերպ օգնել հայ գաղթականությանը։ 1916 թ. Բաղդադի երկաթուղու վրա աշխատող

հայերին տեղահանելուց հետո հարյուրավոր երեխաներ մնացին անօթևան և գերմանացի Կոպպելի կողմից նրանք հավաքվեցին և տեղափոխվեցին Ինթիլի որբանոց, սակայն Կոպպելը խիստ դատապարտվեց Բաղդադի երկաթուղու շինարարության գերմանացի տնօրենի կողմից[4]: Ադանայի գերմանական հյուպատոսության տվյալներով 1916 թ. ապրիլի 16-ի դրությամբ Բաղդադի երկաթգծի կառուցման աշխատանքներին ներգրաված էին շուրջ 1000 բռնազաթված հայեր, որոնք հետագայում նույնպես ենթարկվեցին կոտորածների և աքսորի[5]: Բաղդադի երկաթուղու շինարարությունը ղեկավարող գերմանացի պաշտոնյաները ոչ միայն ակնատես եղան հայ բնակչության տեղահանությանը և կոտորածներին, այլ որպես Օսմանյան կայսրության հարավային երկաթուղային հանգույցների համակարգողներ, անուղղակի մասնակցություն ունեցան արևմտահայության տեղահանությանը դեպի Միջագետքի անապատներ: Նայիմ Բեյը, որը հանդիսանում էր Հալեպի գաղթականների տեսուչի գլխավոր քարտուղարը և հայերի նկատմամբ իր բարյացակամության պատճառով պաշտոնանկ արվեց, իր հուշերում գրել էր, որ հայ գաղթականների տեղահանումը դեպի Ռաս-Ուլ-Այն իրականացվում էր երկաթուղով[6]: Ֆրիդրիխ Նաումանը առաջին աշխարհամատի տարիներին հրատարակած «Միջին Եվրոպա» խորագիրը կրող զրքում գրում էր. «...Քրիստոնեական Գերմանիան միայն կարող է խղճալ հայերին ուրիշ ոչինչ: Նա չի կարող հայերի համար հանդես գալ իր դաշնակցի դեմ: Իր շահերից ելնելով՝ Գերմանիան չպետք է թուլացնի Թուրքիային»[7]: Հայ գաղթականությանը օգնելու պատրաստակամություն հայտնեցին ԱՄՆ կառավարությունը և ամերիկյան բարեգործական ընկերությունները, որոնք առաջարկեցին Գերմանիայի ղեկավարությանը համատեղել ջանքերը հայ բնակչությանը օգնելու հարցում: Այդ հարցումի շուրջ Կ. Դոլսի գերմանական դեսպան Մետերնիխը 1916 թ. մայիսի 25-ին Գերմանիայի արտգործնախարարությանը ուղղված իր զեկուցագրում գրում էր. «Գոմս Բերնսդորֆի կողմից հայերին և ասորիներին ամերիկյան օգնության կոմիտեի ընդունելությունը բոլոր դեպքերում ինձ անցանկալի է թվում... թուրքական կառավարությունը, որը մշտապես բացասաբար է

---

[4] Տե ս Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալէաղ փաշան. Պաշտոնական հեռագրեր. Բոստոն, 1921, էջ 62:

[5] Տե ս Լեփսիուս Ց., Գերմանիան և Հայաստանը 1914-1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, էջ 55:

[6] Տե ս Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալէաղ փաշան. Պաշտոնական հեռագրեր, էջ 45:

Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Եր., 1964, էջ 269:

վերաբերվել գերմանո-ամերիկյան համագործակցությանը Հայկական հարցում և կտրականապես մերժել է այն օգնության գործում...այդ իսկ պատճառով ես կառաջարկեի, որ կոմս Բերնսդորֆը խնդրեր պարոն Մորգենթաուին հետ պահել կոմիտեին իր ծրագրերից...ավելի շուտ առկա է վտանգը, որ նաև գերմանացիների ուղղված ջանքերը հայ բնակչության կարիքների մեղմացմանը կտապալվեն»[8]: Կայսերական Գերմանիայի ղեկավարությունը հայ գաղթականությանը օգնելու հարցում խուսափեց համագործակցել ամերիկյան բարեգործական ընկերությունների հետ, քանի որ այն կարող էր առաջացնել թուրքական իշխանությունների դժգոհություն: Ամերիկյան բարեգործական ընկերությունները անգամ աջակցություն ցուցաբերեցին գերմանական որբանոցներում ապաստանած հայ երեխաներին: Ադանայի գերմանական հյուպատոսության 1916 թ. ապրիլի 15-ի զեկուցագրում նշված է. «Հարուստ գերմանական որբանոցը ներկայումս ընդունել է Օսմանիեից տեղահանված մեծ թվով հայերի, որոնք ամերիկյան կողմից ստացել են անհրաժեշտ միջոցներ»[9]: 1916 թ. նոյեմբերի 28-ին Լեփսիուսը դիմեց Գերմանիայի կառավարությանը տեղահանված հայերին օգնություն ցուցաբերելու խնդրանքով, որում ասվում էր, որ հանուն հայերին օգնելուն ինքը պատրաստ է, հաշվի առնելով Թուրքիայի հետ Գերմանիայի ունեցած դաշնակցային հարաբերությունները, միջոցներ հայթայթելու ժամանակ հակաթուրքական որևէ արտահայտություն չանել: 1917 թ. օգոստոսի 20-ին Գերմանիայի պետական քարտուղարի օգնականը, անդրադառնալով հայ գաղթականներին փրկելու նպատակով գումարներ հավաքելու Յ. Լեփսիուսի առաջարկությանը, իր գաղտնի զեկույցում, ուղղված ներքին գործերի նախարարության ռազմական բարեգործական օգնության հարցերով կոմիսարին, այն կարծիքն էր արտահայտում, որ քաղաքական տեսակետից չափազանց ցանկալի կլինի չխոչընդոտել այդ միջոցների հավաքմանը և հնարավորություն տալ Լեփսիուսին շարունակելու իր օգնության ակցիան, սակայն թույլ չտալ այդ հարցի առնչությամբ մամուլում հրապարակային կոչերի՝ հաշվի առնելով թուրք դաշնակիցների հնարավոր դժգոհությունը: Նշված հանգամանքից ելնելով՝ պետական քարտուղարի օգնականը թույլտվություն էր խնդրում ներքին գործերի նախարարությանը Լեփսիուսի կողմից միջոցների հավաքման համար:

---

[8] Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջաբանի հեղինակ, ակադեմիկոս Վ. Միքայելյան, Եր., 2004, էջ 128:

[9] Լեփսիուս Ց., Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, էջ 55:

Թուրք պաշտոնյաները հայ բնակչության տեղահանությունը դեպի Միջագետքի անապատային շրջաններ փորձում էին ներկայացնել որպես վերաբնակեցման քաղաքականություն: «Վերաբնակեցման» թուրքական քաղաքականության մասին կարևոր տեղեկություններ է պարունակում Բաղդադի երկաթուղու ինժեներ Էռնստ Փիփերը, որը Հալեպից հաղորդում է հարավում՝ քարավանների աքսորավայրերում, իր տեսածի մասին. «Ասացին, որ հայերին բերել են բնակեցնելու Բաղդադի երկաթուղուց 25-30 կմ հեռավորությամբ մի տարածքում: Սակայն աքսորյալները միայն կանայք ու երեխաներ էին»[10]: Թուրքական իշխանությունների կողմից վարվող այդ քաղաքականության մասին կարևոր տեղեկություններ է պարունակում 1915 թ. վերջից Հալեպի գերմանական հյուպատոսության աշխատակից Վիլհելմվիտենի «Գրառումներ Բաղդադից Հալեպ կատարած ճանապարհորդություններից ստացած տպավորությունների մասին» վերնագրով աշխատությունում: Հեղինակը 1916 թ. հունվարի 17-ից մինչև փետրվարի 4-ը ուղևորության ընթացքում ականատես էր եղել հայերի կոտորածներին: Նա նշել էր, որ «...Հայերին թուրքերը անվանում էին ոչ թե գերիներ, այլ վերաբնակիչներ, և նրանք ևս իրեն այդպես են կոչում: Եվ մահվան ամենազզվելի այդ տեսակը պաշտոնական հաղորդագրությունների մեջ կոչվում է վերաբնակեցում»[11]: Գերմանիայի կառավարության ճնշման շնորհիվ, ըստ գերմանացի միսիոներների, գերմանական օգնության միությունում աշխատող բոլոր հայ քրիստոնյաները՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, կառավարության ցուցակներում գրանցվեցին որպես գերմանական առաքելության պատկանելություն ունեցող անձինք և խուսափեցին աքսորից[12]: Սակայն իրականում աքսորից և կոտորածներից կարողացան խուսափել գերմանական այդ կազմակերպությունների անդամ հանդիսացող քիչ թվով հայեր: Միջագետքի անապատներում ապաստանած հայ գաղթականների նկատմամբ պաշտոնական Բեռլինի դիրքորոշման ուսումնասիրման տեսանկյունից կարևոր տեղեկություններ է պարունակում Հալեպի գաղթականների տեսուչի գլխավոր քարտուղար Նայիմ բէյի հուշերը: Հեղինակը

---

[10] Զոմմեր Է., Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մակարյանը, Եր., 2002, էջ 46:

[11] Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջաբանի հեղինակ, ակադեմիկոս Վ. Միքայելյան, Եր. 2004, էջ 8:

[12] Զոմմեր Է., Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մակարյանը, Եր., 2002, էջ 52-53:

նշում էր, որ 1916 թ. գերմանա-թուրքական զորքերի կողմից Բաղդադը վերագրավելու նպատակով Դեր Զոր ժամանեցին գերմանացի սպաներ և ինժեներներ, որոնք մի քանի օր ուսումնասիրեցին տեղանքը և մեծ թվով հայ գաղթականների ներկայությունը այդ գծի վրա (նախատեսվում էր, որ գերմանաթուրքական բանակը Եփրատի ուղղությամբ պիտի իջներ Միջագետք-Գ. Մելքոնյան) անհանգստացնում էր գերմանացիներին, որոնք համոզված էին, որ հայ գաղթականները հարաբերությունների մեջ էին արաբ լրտեսների հետ, որոնց ուղարկում էին անգլիացիները: Այնուհետև, ըստ հեղինակի՝ «...Գերմանացւոց կողմէ եղած շարունակական դիտողութեանց վրայ՝ կառավարութիւնը հեռագիր հեռագիրի հետեւէ կը հասցնէր, այդ գծին երկայնքը գտնուող հայերը վայրկեան մը առաջ իջեցնելու համար Զօր, ուր պիտի ջարդուէին անողորմ կերպով»[13]: Հայ գաղթականների կացարանների մոտով էր անցնում Բաղդադի վերագրավման համար նախատեսված հիմնական զորքի՝ «Եըլտըրըմ» կամ «Կայծակ» բանակի պարենավորման գիծը, ինչպես նաև ռազմական տեխնիկան: Սակայն գերմանացիների հիմնական մտահոգությունը կայանում էր հայ գաղթականների կողմից գերմանաթուրքական հարձակվող բանակի համար պարենավորման խնդիրներ ստեղծելը: Կայսերական Գերմանիայի ղեկավարությունը ոչ միայն անհարժեշտ օգնություն չցուցաբերեց Միջագետքի անապատներում ապաստանած հայ գաղթականությանը օգնելու և սովից ու համաճարակներից փրկելու հարցում, այլև անուղղակի կերպով նպաստեց, որպեսզի հայության այդ հատվածը ենթարկվի թուրքերի կողմից կոտորածի: Հիմնական կոտորածները սկսվեցին, երբ գերմանական զինվորականների պնդմամբ թուրքական զորքերը սկսեցին Հալեպի և շրջակայքի հայության տեղահանությունը Մեսոպոտամիա: Սակայն «Եըլտըրըմ» բանակն այդպես էլ չիջավ Բաղդադը գրավելու, քանի որ Պաղեստինյան ճակատում վիճակը բավականին լուրջ էր, իսկ մյուս կողմից այդ բանակը չհամալրվեց և ստիպված էին հավաքվածներին ուղարկել Պաղեստինյան ճակատ:

Այսպիսով, Կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ հայ գաղթականներին օգնություն ցուցաբերելու խնդիրը կարևորվում էր այնքանով, որքանով անհրաժեշտ էր միջազգային հանրության մոտ այն տպավորությունը ստեղծել, որ գերմանացիները մեղսակից չեն երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությանը: Գերմանիայի ղեկավարությունը հրաժարվեց հայության փրկված հատվածին պաշտոնական աջակցություն ցուցաբերելուց՝ հաշվի առնելով թուրքերի դժգոհությունը: Լեփսիուսի

---

[13] Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալէաղ փաշան, Պաշտոնական հեռագրեր, Բոստոն 1921, էջ 77-78:

ղեկավարած գերմանահայկական ընկերությունը, ինչպես նաև գերմանական, շվեյցարական, ամերիկյան և այլ բարեգործական կազմակերպությունները, բավականին մեծ աշխատանք իրականացրեց հայերին փրկելու նպատակով, սակայն միջոցների սղության պատճառով կազմակերպությունները ի վիճակի չէին օգնելու ողջ հայ գաղթականությանը, իսկ Գերմանիայի ղեկավարության համար կարևոր էր տմեն կերպ գերմանաթուրքական դաշինքի պահպանումը:

Gevorg Melkonyan. The position of Kaiser Germany toward the Armenian refugees in 1916-1917

This article discusses the position of Germany toward the Armenian refugees exiled to the dessert regions of the Ottoman Empire during World War I.

In this article we try to confirm the fact that in the foreign policy of the Kaiser Germany the problem of helping the Armenian refugees was as important as it was necessary to make such impression among the international society that the Germans weren't guilty in genocide policy of the Young Turks. The government of Germany officially refused from helping Armenians as it could become the cause of decline of Germany-Turkish relations.